ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՌԸ X Դ. ՎԵՐՋԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բագրատունի իշխանների գլխավորությամբ IX դարի վերջին վերականգնված հայոց պետականությունը չդարձավ միաձույլ քաղաքական համակարգի հիմք: Զարգացած ավատատիրության դարաշրջանում Հայաստանում սկզբնավորված քաղաքական մասնատման գործընթացը X դարում հանգեցրեց տեղական թագավորությունների առաջացմանը: Կենտրոնական թագավորական իշխանության բացակայության պայմաններում հայ ժողովրդին միավորող միակ համահայկական կառույցը Հայոց եկեղեցին էր՝ իր նվիրապետական և դավանանքային միասնականությամբ:

X դարի երկրորդ կեսին Սյունիքի քաղաքական իշխանությունների՝ ինքնուրույնության տանող քայլերը արձագանք էին գտնում նաև նահանգի հոգևոր իշխանության քաղաքականության մեջ: Այս հողի վրա տարաձայնություններ են ծագում Սյունյաց մետրոպոլիտության և Հայոց կաթողիկոսության միջև: X դարի 60-ական թվականներին Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու (941-965) կոնդակով Սյունյաց աթոռը զրկվում է մետրոպոլիտական առանձնաշնորհումներից: Նույն դարի վերջին թեմը դիմակայում է այլ մարտահրավերների, որոնք դրսևորվում են Սյունիքում վերաբռնկված գյուղացիական հուժկու ապստամբությամբ[1]: Սոցիալական ընդվզումների սլաքն ուղղված էր «գլուխն ամենեցունց վանորէից» Տաթևի վանքի դեմ, որը. տիրապետում էր հսկայական կալվածքների:

965 թ. Սյունյաց Վահան եպիսկոպոսի՝ Հայոց կաթողիկոսի պաշտոնում ընտրվելուց հետո Սյունյաց թեմի առաջնորդ է կարգվում Աշոտ անունով սյունեցի մի հոգևորական: Նրա մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Նրան Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրել Հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունեցին (965-970)[2]: Ենթադրվում է, որ

[1] Պատմաբան Տ. Սահակյանը X դարի սկզբին Սյունիքում ծայր առած ապստամբության ընթացքը բաժանում է երեք փուլի: Երրորդ փուլի սկիզբ համարում է 990-ական թթ. (տե՛ս **Տ. Սահակյան**, Գյուղացիական ապստամբությունը Սյունիքում 10-րդ դարում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 44: Հմմտ. **Հ. Ութմազյան**, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 252):

[2] Հայր Օրմանյանը նկատում է, որ Հայոց հայրապետի պաշտոնում կարճատև աթոռակալելու պատճառով Վահան Սյունեցին չհասցրեց վերականգնել Սյունյաց աթոռի մետրոպոլիտական պատիվը (տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Եր., 2001, հ. Ա, § 803, սյունակ 1359):

Աշոտը ծագումով եղել է Բաղք գավառից, քանի որ այդ շրջանում նահանգի քաղաքական և կրոնական իշխանությունները մեկտեղված էին Բաղաց նախարարների ձեռքում: Կրթությունն ու հոգևոր դաստիարակությունը ամենայն հավանականությամբ ստացել է Վահանավանքում կամ Տաթևում գործող դպրոցներից մեկում: Աշոտը չուներ բարձր եկեղեցական կարգ և որբևայրի երեց էր: Նրա ընտրությունը, ըստ Ստ. Օրբելյանի, պատահական չէր: Որպես ճգնակյաց և խոհեմ հոգևորական՝ նա սիրելի էր «յաչս իշխանաց և երևելի յամենայն գաւառին»[3]: Նահանգային իշխանների սերն ու հարգանքը վայելելու փաստն ընդգծելով՝ շրջահայաց մատենագիրը հուշում է նաև աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև տարաձայնությունների բացակայության մասին: Դա, անշուշտ, բխում էր տնտեսական և քաղաքական ընդհանուր շահերից և սպասվելիք վտանգներին միասնաբար դիմակայելու անհրաժեշտությունից: Աշոտի աթոռակալությունն ունեցել է երկու փուլ. առաջին անգամ աթոռակալել է 965-982 թթ.:

Հովվելով տասնյոթ տարի՝ Աշոտը հրաժարվում է պաշտոնից և «աղօթից պարապեաց»: Սյունիքի նոր եպիսկոպոս է ձեռնադրվում Աշոտի որդին՝ Հովհաննես Զ-ն, որը դեռ պատանեկան հասակից ստացել էր կրոնական պատշաճ դաստիարակություն: Հայրն առանձնահատուկ հոգ էր տարել որդու հոգևոր զարգացման համար՝ նրան մեծացնելով «մեծաւ զգուշութեամբ»: Հովհաննեսի մասին տեղեկությունները նույնպես չափազանց սուղ են: Ենթադրվում է, որ Հովհաննես Զ-ն եպիսկոպոս է ձեռնադրվել Հայոց կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունու (973-992) ձեռամբ: Պատմիչը Հովհաննեսին բնութագրում է որպես «պարկեշտ և սրբակրօն, պատշաճագեղ և հանճարեղ»[4]: Քիչ հավանական է, որ Սյունյաց աթոռակալների գործունեությանը քաջատեղյակ Ստ. Օրբելյանը այսպիսի մակդիրներ շռայլեր որևէ հոգևորականի հասցեին՝ առանց վստահ լինելու նրա արժանավորությանը: Սակայն նրա գործունեության մասին մանրամասներ չի հաղորդում: Դատելով Հովհաննես Զ-ի վեցուկեսամյա պաշտոնավարման ժամանակաշրջանից (982-989)՝ կարելի է պնդել, որ 987 թ. Սյունիքի՝ որպես անկախ թագավորության հռչակումը տեղի է ունեցել հենց նրա օրոք: Այդ ժամանակ Սյունյաց գահերեց իշխան Սմբատ Սահակյանը «թագ կապեալ ինքեան՝ թագաւորեաց»[5]: Ենթադրելի է, որ «բարեպաշտ եւ աստուածասէր» արքա Սմբատ Սահակյանի թագադրման կրոնական արարողությունները և օծումը կատարել է Հովհաննես Զ եպիսկոպոսը:

---

[3] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մ., 1861, գլ. ԾԳ, էջ 212:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 213: Նշանավոր հայագետ Բ. Հարությունյանի կարծիքով՝ Սմբատ Բ-ն 976-987 թթ. եղել է Սյունյաց գահերեց իշխան, իսկ 987 թվականից իշխել է թագավորի կարգավիճակով (տե՛ս **Բ. Հարությունյան**, Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 150, 152):

Հովհաննեսի մահից հետո վերստին առաջնորդի գավազանն իր ձեռքն է վերցնում հայրը: «Բռնադատեալ զհայրն նորին զԱշոտ կացուցանեն ի նոյն աթոռ»[6],- փաստում է Սյունյաց մատենագիրը: Պատմիչի խոսքերից երևում է, որ այս անգամ նա հոժարակամ չի ստանձնել պաշտոնը, նրան ստիպելով են նստեցրել եպիսկոպոսական աթոռին: Երկրորդ շրջանում հովվելով հինգուկես տարի (989-994)՝ Աշոտը ծեր հասակում վախճանվում է:

Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992-1019) Սյունյաց թեմի նոր առաջնորդ է ձեռնադրում Սամվելին: Նա, ըստ պատմիչի, հեզ ու բարի անձնավորություն էր: Վերջինիս գործունեությունը նշանակալի ձեռնարկներով աչքի չի ընկել: Սամվելը պաշտոնավարել է «ամս երեք և փոխեցաւ մահուամբ»[7] (994-997): Հաշվի առնելով X դարի 90-ականներին ծավալված սոցիալական և կրոնական խմորումները՝ դժվար է պատկերացնել, որ նրա աթոռակալումը անցած լինի առանց ցնցումների: Ցավոք, բացի նրա անձնական հատկանիշների մասին դրական արտահայտվելուց, պատմիչն այլ տեղեկություն չի հաղորդում:

Դատելով վերոհիշյալ եպիսկոպոսների մասին պահպանված սուղ տեղեկություններից՝ կարելի է ասել, որ 970-980-ական թվականներին Սյունիքում արտաքուստ տիրում էր հարաբերական հանդարտություն: Դա է պատճառը, որ այդ երեք եպիսկոպոսները զբաղված են եղել գերազանցապես իրենց կրոնական ընթացիկ գործառույթների իրականացմամբ և նշանակալի գործերով աչքի չեն ընկել: Սակայն ենթադրվում է, որ այդ շրջանում արդեն ընթանում էին սոցիալական ծածուկ խմորումներ: Այդ գործընթացները X դարի սկզբին Սյունիքում ծայր առած գյուղացիական ապստամբության արձագանքներն էին, որոնք նույն դարի վերջին տասնամյակում պետք է պայթեին նոր թափով[8]: Բորբոքված գյուղացիական բողոքի սլաքներն ուղղված էին ավատատիրական հասարակարգում գործող տնտեսական հարաբերություն-

---

[6] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 212:

[7] Նույն տեղում, էջ 213: Ստեփանոս Օրբելյանի երկի փարիզյան հրատարակության մեջ նշվում է հինգ տարի (տե՛ս **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, ի լոյս ընծայեաց Կ. Շահնազարեանց, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 34: Հմմտ. **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 251):

[8] Սյունյաց իշխանները X դարի առաջին տասնամյակում մի քանի գյուղեր իրենց բնակիչներով նվիրում են Տաթևի վանքին: Այդ գյուղերի բնակիչները դիմում են ապստամբության: Ապստամբները ամրանում են Ցուրաբերդում և առաջին հերթին հաշվեհարդար են տեսնում հոգևորական ավատատերերի հետ, ապա զինված ջոկատներով հարձակվում Տաթևի վանքի վրա: Սպանում են բազմաթիվ վանականների, ավերում վանքը, խլում վանքի գույքը և տանում Ցուրաբերդ: Ապստամբների կողմից հալածված Հովհաննես Ե եպիսկոպոսը (882-918) դիմում է Սյունյաց գահերեց իշխան Սմբատ Ա-ի (909-940) օգնությանը: 916 թ. Սյունյաց իշխանները ձեռնարկում են ապստամբությունը ճնշելու գործողություններ (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԷ, էջ 180-182):

ների դեմ: Շարժման գլխավոր թիրախը Սյունյաց եկեղեցին էր որպես խոշոր կալվածատեր: Սյունյաց իշխանները հսկայական հողեր և հարստություններ էին նվիրաբերում նահանգի եկեղեցիներին և հոգևոր հաստատություններին[9]: Այդ կալվածքներում աշխատում էին հազարավոր գյուղացիներ, որոնք էլ բողոքի գործողությունների գլխավոր ուժն էին: Նրանք ըմբոստանում էին հոգևոր հաստատությունների դեմ, որոնք ոչ միայն տիրապետում էին ընդարձակ տիրույթների, այլև գործող հասարակական հարաբերությունների գաղափարախոսն ու սրբագործողն էին[10]: Սոցիալական ուղղվածությամբ պայքարը խրախուսվում էր արտաքին ուժերից և օգտագործվում թոնդրակյան աղանդավորական շարժման ղեկավարների և գաղափարախոսների կողմից[11]: Վերջիններս, խաղալով Սյունիքի գյուղացիության շրջանում ձևավորված դժգոհությունների վրա և շահարկելով առկա սոցիալական խնդիրները, փորձում էին հարվածել Հայոց եկեղեցու թևերին, ճեղքել նրա դավանանքային և կառուցվածքային միասնականությունը: Սյունիքը, աշխարհագրորեն հեռու գտնվելով Հայաստանի քաղաքական և կրոնական կենտրոններից, համահայկական կենտրոնացված թագավորության բացակայության պայմաններում նրանց համար հարմար թիրախ էր:

Քաղաքական, սոցիալական և կրոնական տագնապներով լի ժամանակաշրջան էր ապրում Սյունիքը, երբ հոգևոր վիճակը վստահվեց Հակոբ Բ եպիսկոպոսին: Պատմիչը վերջինիս բնութագրում է «զայր մի լաւ և յոյժ պիտանի՝ սնեալ սրբութեամբ և կուսութեամբ»[12]: Հակոբի աթոռակալման տարիների թիվը որոշակի չէ, սակայն հայտնի է, որ նրա

---

[9] Ստեփանոս Օրբելյանը պատմում է այն հսկայական հարստությունների և կալվածքների մասին, որոնք նվիրաբերվել են Տաթևի վանքին (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԼԸ, էջ 146-156): Տաթևի եպիսկոպոսական թեմը Հայաստանի նահանգային թեմերից ամենահարուստն էր: Այդ հարստությունների մեծ մասը վանքը ձեռք էր բերել որպես նվիրատվություն (տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 242): Տաթևի վանքի սեփական գյուղերի թիվը հասնում էր 32-ի, իսկ հարկատու գյուղերի թիվը՝ 677-ի: Սյունյաց նահանգային եպիսկոպոսությունը, որի կառուցվածքում կային սեփական գյուղեր ունեցող վանքեր, որպես իրեն պատկանող սեփականություն ուներ ավելի քան 47 գյուղ (տե՛ս **Գր. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Եր., 1973, էջ 41, ծան. 79):

[10] Տե՛ս **Գր. Գրիգորյան**, նշվ. աշխ., էջ 224:

[11] Աշ. Հովհաննիսյանի կարծիքով՝ Ցուրաբերդի ապստամբ գյուղացիները առնչություն են ունեցել թոնդրակեցիների հետ. դրա վկայությունը մեռոնի մերժումն է ցուրաբերդցիների կողմից (տե՛ս **Աշ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Եր., 1957, հ. Ա, էջ 374): Հավատացյալ հայերի համար «սրբություն սրբոց» համարվող մեռոնը ժայռից թափելու փաստը Ա. Աբրահամյանը համարում է բացառիկ երևույթ և եզրակացնում, որ Սյունիքի ապստամբ գյուղացիները կապ են ունեցել Հայաստանի այլ վայրերում գործող աղանդավորական շարժումների հետ (տե՛ս **Абрамян А.** Крестьянское движение в Сисакане в X в. // «Исторические записки», АН СССР, № 3, 1938, էջ 65):

[12] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 213:

հովվապետության ժամանակ «վախճանի Սմբատ՝ Սիւնեաց տէր, որդի Սահակայ»[13]: Ստույգ է, որ Սմբատ Ա Սյունի արքան մահացել է 998 թվականին. այս տարեթիվն ամրագրված է նրա կնոջ՝ Շահանդուխտ թագուհու թողած արձանագրության մեջ[14]: 998 թ.՝ Սմբատ Սյունու մահից հետո, գահն անցնում է նրա որդի Վասակին, որին Սյունիքի թագավոր է օծում ոչ թե Հակոբը, այլ նրան հաջորդած Գրիգոր եպիսկոպոսը[15]: Սակայն սա չի նշանակում, որ 998 թ. Հակոբն արդեն մահացել էր: Կարծում ենք՝ Վասակը Սյունիքի թագավոր պաշտոնապես օծվել է ոչ թե հոր մահվան նույն տարում, այլ նրա վախճանվելուց որոշ ժամանակ անց: Հավանական է, որ նոր թագավորի պաշտոնական օծման արարողությունը հետաձգվել և միացվել է 1000 թ. Շահանդուխտ թագուհու կառուցած Վաղադնի եկեղեցու նավակատիքի տոնակատարություններին: Այդ պատճառով 1000 թ. Վասակի թագավորական օծումը իրականացրել է ոչ թե Հակոբ, այլ Գրիգոր եպիսկոպոսը: Հետևաբար՝ Հակոբի աթոռակալության ժամանակաշրջանը 997-1000 թթ. միջև է: Հակոբի պաշտոնավարման կարճատևությունը հիմնավորվում է այն փաստով, որ նա բնական մահով չի մահացել, այլ սպանվել է ապստամբ գյուղացիների ձեռքով: Աթոռակալության տարիները հուշում են, որ նրան Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրել Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին (992-1019):

Հակոբ Բ եպիսկոպոսի օրոք վանական կալվածատիրության դեմ Սյունիքի գյուղացիության վերսկսված պայքարը հասնում է իր գագաթնակետին: Գյուղացիների գործողություններն այդ ժամանակ դառնում են ավելի վճռական և ծայրահեղ: Պատճառը եկեղեցական կալվածքների և հողատարածությունների ընդարձակման նպատակային այն քաղաքականությունն էր, որ ձեռնարկել էր Հակոբը: Նրա կարճատև աթոռակալման շրջանում թեմի կալվածքներն ու կարողությունները մեծապես ավելանում են: Սյունյաց առաջին թագավոր Սմբատ Ա-ի մահից հետո նրա բարեպաշտ կինը՝ Շահանդուխտ թագուհին, որդիներ Վասակն ու Սևադան նրա հոգու փրկության համար Տաթևի եպիսկոպոսարանին են նվիրում վեց հազար դրամ և Հաբանդ գավառի Տեղ[16] գյուղը: Այդ մասին Շահանդուխտ թագուհու հրամանով 998 թ. երկաբաշունչ վճռագիր է կազմում նրա որդի Վասակը, որում ասվում է. «Յանուն Աստուծոյ կամ եղև ինձ Շահանդխտոյ՝ դստեր Սևադայի, տալ ի Հաբանդ գաւառի զանուանեալ շէնդ զՏեղ՝ իւր ամենայն բոլոր սահ-

[13] Նույն տեղում:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 214:

[15] Տե՛ս նույն տեղը, գլ. ԾԴ, էջ 220:

[16] Մեծավաստակ Ղ. Ալիշանը սխալմամբ Տեղ գյուղի փոխարեն նշում է Տող գյուղը (տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 231): Տողը գյուղ է Արցախի Հանրապետության Հադրութի շրջանում. այն միջին դարերում եղել է Դիզակի մելիքության կենտրոնը (տե՛ս **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ե, Եր., 2001, էջ 117):

մանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք, զոր իմ թագաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, և իմ՝ ի կորդոյ շէն դրեալ. և ես յետ ելից երանելի թագաւորին իմոյ յաստեացս՝ իւր հոգւոյն ի Տաթև ի սուրբ մայրաքաղաքն և ի սուրբ նշանն ետու ի ձեռն տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի»[17]: Վասակի մատանիով կնքված նույն վճռագրով Տեղ գյուղը ազատվում է բոլոր հարկերից: Այդ կապակցությամբ, ինչպես վկայում են Հակոբ Բ և նրան հաջորդած Գրիգոր Գ եպիսկոպոսների գրավոր պատգամները, Սյունյաց եկեղեցիներում կրոնական տոներին պետք է իրականացվեր պատարագ՝ նվիրված Սմբատ Ա Սյունու հիշատակին:

Հակոբ Բ եպիսկոպոսի վարած տնտեսական քաղաքականությունը էապես չէր տարբերվում դարասկզբի իր հայտնի նախորդներից մեկի՝ Հովհաննես Ե եպիսկոպոսի (882-918) գործելաոճից: Չբավարարվելով Տաթևի աթոռին կատարվող նվիրատվություններով՝ նա փորձում է յուրացնել վանքի շրջակա Ցուր գյուղի հողերը, որի բնակիչները «հին հայրենատէրք» էին: Ինչպես նախկինում, այժմ էլ վանքը փորձում էր անհատույց յուրացնել Ցուրի և շրջակա որոշ գյուղերի հողերը, իսկ այնտեղ ապրող գյուղացիներին արտաքսել[18]: Գյուղացիների պապենական հողերը յուրացնելով՝ հոգևոր իշխանությունը հարմար տարածք էր ձեռք բերում նոր վանական համալիր կառուցելու համար: Նախատեսվում էր այդտեղ կառուցել վանականների նոր կացարաններ[19]: Տաթևի վանքի շրջակա գյուղերի հողերից բնակիչներին արտաքսելով՝ հոգևորականությունը լուծում էր ևս մեկ ոչ պակաս կարևոր խնդիր. չեզոքացնում էր գյուղացիների կողմից վանքին սպառնացող այն վտանգը, որը «ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն»[20]: Պատմիչի այս արձանագրումը թույլ է տալիս եզրակացնել, որ առավելապես տեղահանել են այն գյուղերի բնակիչներին, որոնք ընդվզել են հոգևոր իշխանությունների դեմ և պայքարել իրենց հողային իրավունքների համար: Բռնագրավելով վանքի շրջակայքի գյուղերը՝ եպիսկոպոսները, ինչպես նկատում է նշանավոր պատմաբան Ջավախիշվիլին, «ցանկանում էին, որ աթոռին կից ոչ մի բնակչություն չլինի, և դրա համար հարևան գյուղերի բնակիչներին ստիպում էին թողնել իրենց տեղն և

---

[17] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 213:

[18] Ոչ բոլոր դեպքերում է իշխանությանը հաջողվել արտաքսել գյուղացիներին առանց նյութական հատուցման: Տեղահանման գործողություններին ցուրացիներից ոչ պակաս համառ դիմադրություն են ցույց տվել տամալեկցիները: Այստեղ իշխանությունը ռազմական ուժի փոխարեն կիրառել է այլ մեթոդ՝ ստիպելով գյուղացիներին վաճառել իրենց հողերը: Սյունյաց Սոփիա տիկինը, ընդառաջելով Հակոբ Ա եպիսկոպոսի (918-958) թախանձանքին, 1000 դահեկանով գնում է Տամալեկ գյուղը և նվիրում վանքին (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. Ծ, էջ 198):

[19] Տե՛ս **Арутюнян Б.** Крестьянские волнения в Сюнии в X веке, «Ученые записки», № 2, 1950, էջ 181:

[20] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԱ, էջ 168:

փոխադրվել ուրիշ տեղ: Իհարկե, սա գյուղացիներին բնավ դուրեկան չէր: Գյուղացիները երբեք չէին ցանկանում տեղահան լինել և եպիսկոպոսներին դիմադրություն էին ցույց տալիս»[21]:

Հայրենի գյուղերից մարդկանց տեղահանության փորձերը և տնտեսական շահագործման խստացումը հակադարձվում են գյուղացիների բողոքի սուր գործողություններով[22]: Սյունյաց պատմիչի հաղորդած տեղեկությունները վկայում են, որ ցուրացիները հարձակվել են վանքի վրա, հարուցել «մեծամեծ հալածումն եկեղեցւոյն»: 999 թ. ապստամբ գյուղացիները Ցուրաբերդից շարժվում են դեպի Տաթևի վանք և «կրկին աւերեցին զվանսն»[23]: Այստեղ նրանց են միանում նաև վանքի հարակից տարածքներում աշխատող ճորտ գյուղացիները[24]: Նրանք դատաստան են տեսնում այդ պահին այդտեղ գտնվող վանականների հետ, կողոպտում և Ցուրաբերդ են տանում վանքի բազմաթիվ գանձեր:

Գնահատելով իրավիճակի լրջությունը՝ Հակոբ եպիսկոպոսը Տաթևից «երթեալ էր ի Բաղս»[25]: Ստ. Օրբելյանի կողմից Հակոբի՝ Բաղք մեկնելու ուշագրավ մանրուքը շեշտելը պատահական չէ: Բաղքում էր գտնվում երկրամասի քաղաքական կենտրոնը՝ Կապանը, որտեղ նստում էին նահանգի իշխանները: Աներկբա է, որ Հակոբը մեկնել է Կապան՝ օգնության խնդրանքով Վասակ թագավորին դիմելու համար: Գյուղացիական շարժման սպառնալի ծավալները, թեմի կալվածքների հափշտակման իրական վտանգը ստիպում են նրան ապավինել նահանգի քաղաքական ուժին: Արձագանքելով հոգևոր առաջնորդի խնդրանքին՝ Վասակ Սմբատյանը (998-1040), վերջինիս եղբայր Սևադան և նրանց մայր Շահանդուխտ թագուհին գործուն միջոցների են դիմում՝ վանքը գյուղացիների հարձակումներից պաշտպանելու համար: Ենթադրվում է, որ սկզբնական շրջանում նրանք ուժային գործողությունների չեն դիմում, պարզապես ջոկատներ են տրամադրում վանքը

---

[21] **Ի. Ջավախիշվիլի**, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար X դ. և XIII դ. սկզբներին, Եր., 1936, էջ 13: Ակադ. Ջավախիշվիլու կարծիքով՝ Տաթևի վանքին նվիրաբերված գյուղերի բնակիչների վիճակը ավելի բարվոք էր, քան կալվածատերերի հողերի վրա աշխատող գյուղացիության, այդ պատճառով մասնավոր կալվածատերերի ճորտերը, եկեղեցական ճորտ դառնալուց ոչ միայն չէին խուսափում, այլև ընդհակառակը՝ սովորաբար ուրախ էին լինում (տե՛ս **Ի. Ջավախիշվիլի**, նշվ. աշխ., էջ 12-13): Սակայն նշանավոր պատմաբանն իր այս կարծիքը հիմնավորող որևէ փաստարկ չի մատնանշում:

[22] Գյուղացիների՝ հայրենի գյուղերից տեղահանման առիթով անընդունելի կարծիք է հայտնում Հ. Ութմազյանը՝ ասելով, որ նրանց համար իրենց գյուղերից հեռանալը ծանր գործ չէր և չէր կարող գյուղացիների ընդվզման պատճառ դառնալ (տե՛ս **Հ. Ութմազյան**, նշվ. աշխ., էջ 281):

[23] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԷ, էջ 183:

[24] Տե՛ս **Տ. Սահակյան**, նշվ. աշխ., էջ 44:

[25] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԷ, էջ 183:

հարձակումներից պաշտպանելու համար: Միաժամանակ կատարում են վանքի վերանորոգման աշխատանքներ, սակայն այն կրկին արժանանում է նույն ճակատագրին՝ ավերվելով ապստամբների կողմից:

Հակոբ եպիսկոպոսի նկատմամբ գյուղացիների ատելությունն այնքան մեծ էր, որ Կապանից վերադարձի ճանապարհին նա ենթարկվում է ավազակային հարձակման ցուրաբերդցի դարանակալ գյուղացիների կողմից: «Շնաբարոյքն այն գաղտ պահեալ զճանապարհն, որ անցանէ ընդ խոռն Ցուրայ՝ յարեան ի վերայ և սպանին զեպիսկոպոսն»[26],- իր կողմից անհանդուրժելի այդ փաստն այսպես է արձանագրում Սյունյաց բարձրաստիճան հոգևորականը: Հակոբը թաղվում է հենց այն ձորում, որտեղ նրան սպանել էին: Այդ վայրը հետագայում դառնում է ուխտատեղի[27]:

Սյունյաց նոր թեմակալ-առաջնորդ է ձեռնադրվում Գրիգոր Գ-ն, որը միաժամանակ Տաթևի վանական միաբանության վանահայրն էր: Նրան պատմիչը բնութագրում է որպես հոգևոր արժանիքներով պայծառացած, հարուստ ներաշխարհով և վայելչատես կրոնավոր, որ «արար բազում գործս երևելիս ի տան հայրապետանոցին»[28]: Առաջնորդի պաշտոնում Գրիգորը հովվում է 1000-1006 թթ.: Նրա ձեռնադրությունը ևս կատարել է այդ տարիների Հայոց հայրապետ Սարգիս Ա Սևանցին: Գրիգորի պաշտոնակալումը մեկնարկում է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ վերսկսված բողոքի գործողությունները ստանում էին գլորվող ձնագնդի էֆեկտ: Սյունիքի հոգևոր հաստատություններին պատկանող կալվածքների և ունեցվածքի մի մասն արդեն բռնագրավված էր ապստամբների կողմից, իսկ մյուս մասն էլ նրանց հարձակումների թիրախ էր: Հարևան որոշ գավառներ յուրացրել էին նախկինում Սյունիքի թեմապատկան բազմաթիվ գյուղեր և կալվածքներ: Տաթևի եպիսկոպոսարանն ավերված էր: Այդ պայմաններում Գրիգորի առաջնահերթ խնդիրը ապստամբության օջախների մարումն էր, եկեղեցական կալվածքների, ունեցվածքի վերականգնումը: Ահագնացող վտանգը կանխելու համար իշխանությունը նոր առաջնորդի խնդրանքով դիմում է վճռական քայլերի: Վասակ թագավորը մի զորագունդ է տրամադրում իշխանաց իշխան Սևադային[29] և հանձնարարում ապստամբությունը ճնշել՝ իսպառ ջնջելով Ցուրաբերդի հետքերը: Կտրուկ գործողություններով 1000 թ. Սևադան վերջնականապես ճնշում է ապս-

---

[26] Նույն տեղում: Ջավախիշվիլին սխալմամբ կարծում է, թե սպանված եպիսկոպոսը Հակոբ Ա Ապստամբն է (918-958) (տե՛ս **Ի. Ջավախիշվիլի**, նշվ. աշխ., էջ 21):

[27] Հայր Ալիշանը ենթադրաբար նույնացնում է այս վանքը Առաքել Դավրիժեցու հիշատակած Ձորո վանքին կամ նոր ժամանակների Սվարանց գյուղին (տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 245):

[28] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 215:

[29] Պատմաբան Տ. Սահակյանի կարծիքով՝ Սյունիքում իշխանաց իշխանը թագավորական զորքերի հրամանատարն էր (տե՛ս **Տ. Սահակյան**, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «ՊԲՀ», 1966, № 3, էջ 223):

տամբությունը, դաժանորեն պատժում Ցուրաբերդի ապստամբ գյուղացիներին, որոնց նզովել էր դեռևս Սյունյաց եպիսկոպոս Հովհաննես Ե-ն[30]: «Քակեաց և զանիծաբնակ քարն Ցուրայ և բնաջինջ յատակեաց»[31],- Սևադա իշխանի իրականացրած գործողությունների արդյունքները համառոտ այսպես է ամփոփում Սյունյաց պատմիչը: Այդ առիթով Գրիգորը կազմում է սոսկալի անեծքներով լի նոր նզովագիր, խոստանում «փակել յայժմուս և ի հանդերձեալ կեանսն վասն Ցուրայ քարիդ շինողի», իսկ Ցուրի վերականգնման մտադրություն ունեցողներին սպառնում. «Որ այլ յանդգնի շինել՝ նզովեալ լիցի ի Հօրէ և յՈրդւոյ և ի սուրբ Հոգւոյն. որդիք նորա մուրողք եղիցին և ելցեն ի բնակութենէ իւրեանց և մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց»[32]: Վասակ թագավորի և Գրիգոր եպիսկոպոսի վճռական գործողությունների շնորհիվ վերջակետ դրվեց մոտ մեկ հարյուրամյակ տևած և մի քանի ալիքով փոթորկված գյուղացիական ապստամբությանը: Երախտապարտ հոգևորականությունը ապստամբությունը ճնշած Սյունյաց իշխաններին պատվում է «աստուածասէր», «բարեպաշտ», «քաջահաւատ» տիտղոսներով:

Ընդվզումներին վերջ տալուց հետո Գրիգորը ձեռնամուխ է լինում Տաթևի եպիսկոպոսարանի վերականգնմանը, որը բազմիցս ենթարկվել էր ապստամբների հարձակումներին: Գրիգորի գործունեության այս ոլորտը նկատի ունի Ստ. Օրբելյանը՝ ասելով՝ «արար բազում գործս երևելիս ի տան հայրապետանոցին»[33]: Գրիգորի օրոք շարունակվում են իշխանական նվիրատվությունները: Զագիկ իշխանի որդի Փարաջը իր սեփական կալվածքներից Բոլորաքար գյուղը[34] որպես նվիրատվություն հանձնում է Տաթևին Գրիգորի միջոցով: Նվիրաբերված կալվածքի սահմաններից դուրս էր մնում միայն Նորիքի վանքի տարածքը, որն ավելի ուշ է անցնում վանքի տնօրինությանը[35]: Նրանք կազմում են վճռագիր՝ հետևյալ բովանդակությամբ. «Յանուն Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Փարաջոյ՝ որդւոյ Զագկայ իշխանի, որ կարդացաք զառաջնոց գիրն և վերստին հաստատեցաք զԲոլորաքարն իւր սահմանօքն, որ էր իմ սեպհական ժառանգութիւն՝ ի Տաթևոյ սուրբ եկեղեցիքս և ի տէր Գրիգոր. զի յառաջ նոցա հաստատած հայրենիք էր՝ և սակաւ

---

[30] Հովհաննես Ե-ն կառուցել է Տաթևի Սբ. Պողոս-Պետրոս մայր եկեղեցին, աթոռակալել է 882-918 թթ.:

[31] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 215: Եթե Հակոբ եպիսկոպոսը չսպանվեր, ուժային նույն գործողությունները կատարվելու էին նրա օրոք: Սա նշանակում է, որ Ցուրի կործանման դատավճիռը կայացված էր ի սկզբանե:

[32] Նույն տեղում, գլ. ԽԷ, էջ 183:

[33] Նույն տեղում, գլ. ԾԳ, էջ 215:

[34] Գտնվում է Տաթևի վանքից ոչ հեռու՝ մոտ մեկ կմ հեռավորության վրա. այս գյուղատեղին ներկայումս կոչվում է Պլուրաքար (տե՛ս **Գր. Գրիգորյան**, Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղագրության հարցի շուրջը, «ՊԲՀ», 1966, № 4, էջ 239: Հմմտ. **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., հ. Ա, 1986, էջ 722):

[35] Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԳ, էջ 215:

ժամանակօք հեռացեալ էր վասն խանգարման եպիսկոպոսացն.- մեք վերստին հաստատեցաք զնոյն այգւով և ծառով և տնկով, հողով և ջրով ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս, ի սուրբ նշանս և ի սուրբ առաքեալս՝ ի ձեռն տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»[36]: Փարաջը թեև հայտնում է, որ Բոլորաքար գյուղը նվիրում է Տաթևի վանքին սեփական ցանկությամբ՝ ոչ «ի հարկէ» կամ «բռնութենէ», սակայն նվիրելու հիմնական շարժառիթն իրականում այլ էր: «Բոլորաքարը նախապես պատկանելիս է եղել Տաթևի վանքին և Գրիգոր եպիսկոպոսի խնդրանքով թագավոր Վասակը իր վասալ իշխանին հրամայել է այդ գյուղը վերադարձնել նախկին տերերին»[37],- գրում է պատմաբան Գր. Գրիգորյանը:

Գրիգորի օրոք թեմը հարստանում է կրոնական նոր շինություններով: Սմբատ Ա թագավորի կին և Աղվանից Սևադա թագավորի դուստր Շահանդուխտ թագուհին Ծղուկ գավառի Վաղադին գյուղի տարածքում ձեռնարկում է նոր վանական համալիրի շինարարություն: Այստեղ նա հղկված քարերով 1000թ. կառուցում է եկեղեցի՝ ս. Ստեփանոս նախավկայի անունով: Այդ վայրը դեռ վաղուց ուխտատեղի և ճգնավորների բնակավայր էր, որտեղ, ըստ Սյունյաց պատմագրի, գոյություն է ունեցել եկեղեցի Գրիգոր Լուսավորչի անունով: Այն հետագայում վերակառուցվում է տեղի ճգնավորների կողմից, որոնցից հիշատակվում է ոմն Ստեփանոս վարդապետ[38]: Նորահիմն Վաղադնի վանքի[39] տարածքում կառուցվում են կրոնավորների և մեծաթիվ սպասավորների կացարաններ, աղոթատուն, պահեստներ և արհեստանոցներ: Վանական միաբանության տնտեսական կարիքները հոգալու համար թագուհին վանքին է նվիրաբերում Գոմեր ագարակը[40] և այլ կալվածքներ. «Շինէ և տուն աղօթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս, շուրջ պարսպէ զվանքն և որոշէ նմա անդաստանս ի Վաղանդնոյ, և տայ զԳոմեր ագարակ ի վանսն. պայծառա-

---

[36] Նույն տեղում:

[37] **Գր. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, էջ 94:

[38] Ստույգ հայտնի չէ, թե եկեղեցիներից որն է կառուցել կամ նորոգել Ստեփանոս վարդապետը, բայց քարի վրա պահպանվել է նրա արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ ՀԻՄՆԱՐԿԵՑԻ: ՆԽ: …..ՋԵԿԵՂԵՑԻ….ՈՎ ՍՈՒՐԲ….» (**Ս. Բարխուդարյան**, Դիվան հայ վիմագրության, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, Եր., 1960, էջ 99): Եկեղեցին վաղ միջնադարում հայտնի է եղել օձի խայթոցից բուժելու իր զորությամբ:

[39] Վանքը XIV դարից կոչվել է Որոտնավանք՝ ոչ հեռու գտնվող Որոտն-Ուռուտ գյուղի անունից (տե՛ս **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., պրակ II, էջ 99):

[40] Ծղուկ գավառի գյուղերից է: Ըստ հին հարկացուցակի՝ Տաթևի վանքին վճարում էր 7 միավոր հարկ: Մասնագետները այն նույնացնում են Սիսիանի տարածաշրջանի Աղուդի, Վաղուդի գյուղերին մոտ գտնվող Քյոմուր գյուղատեղիի հետ (տե՛ս **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 938): Գոմերի ագարակները հավանաբար եղել են Վաղադին գյուղին կից ձորահովտի բերքառատ հողամասերը՝ Որոտան գետի ափին (տե՛ս **Տ. Սահակյան**, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, «ՊԲՀ», Եր., 1966, № 3, էջ 223):

պէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք»[41]: Ս. Կարապետ եկեղեցու արևմտյան պատին պահպանվում է 1315 թ. գրառված մի արձանագրություն, որով նրա հեղինակները՝ Տարսայիճ իշխանի թոռներ Բուրթելն ու Պուղտան, վերահաստատում են XI դարում վանքի տիրապետած կալվածքները: Բովանդակությունից պարզ է դառնում, որ վանքը որպես սեփականություն տիրապետել է նաև այլ գյուղերի, այգիների, հողատարածքների: Վանքի սահմանները հասել են մինչև Շնհեր՝ ներառելով Երեմ գյուղը[42]:

1006 թ. Վասակի կրտսեր եղբայր, իշխանաց իշխան Սևադան Վաղաղնի վանքի տարածքում Ս. Ստեփանոս նախավկա եկեղեցու հարեվանությամբ սրբատաշ քարով կառուցում է գեղեցիկ կենտրոնագմբեթ եկեղեցի՝ Ս. Կարապետ: Դրա արևմտյան կողմում կառուցվում է նաև գավիթ: Անհանգիստ ժամանակներում ապահովության նկատառումներից ելնելով՝ այս բոլոր շինությունները շրջապատվում են բարձր պարիսպներով[43]: Մահից հետո Շահանդուխտ թագուհու և իշխանաց իշխան Սևադայի մարմինները ամփոփվում են վանքի տարածքում:

Սյունյաց աթոռի՝ X դարի վերջին քառորդի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լեռնաշխարհի ժողովուրդը ապրում էր սոցիալական տագնապներով լի շրջան: Հոգևոր ավատատիրության դեմ ուղղված Սյունիքի գյուղացիության պայքարի գլխավոր պատճառը գյուղացու տնտեսական և իրավական վիճակի վատթարացումն էր[44]: Եկեղեցական ավատատերերի վարած տնտեսական քաղաքականությունը իր մեթոդներով երբեմն ավելի անտանելի էր, քան աշխարհիկ տերերինը: Տնտեսական շահագործման նոր ձևերը գյուղացիության հարստահարումը հասցրել էին աննախադեպ ծավալների: Սյունյաց հոգևոր առաջնորդները, բացի աշխարհիկ իշխանություններից ստացած հսկայական հողային նվիրատվություններից, զավթում էին նաև դեռևս ազատ մնացած գյուղական համայնքների հողերը: Այդպիսի գյուղեր էին Ցուրը, Տամալեկքը, Ավելադաշտը (Բերդ), որոնց բնակիչները «հին հայրենատերք էին»[45]: X դարի առաջին կեսին վերջիններս

---

[41] «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԴ, էջ 221: Որոտնավանքը ուներ նաև սեփական ձիթհաններ, սրանց (տե՛ս **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., պրակ II, էջ 104, հմմտ. **Գր. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, էջ 119):

[42] Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, նշվ. աշխ., պրակ II, էջ 100-101: Հմմտ. **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 525: Մեծության պատճառով X դարում Հաբանդ գավառի մի մասը կրում էր Շնհեր անունը (տե՛ս **Թ. Հակոբյան**, Սյունիքի թագավորությունը, Եր., 1966, էջ 157):

[43] Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԴ, էջ 221: Շինարարական աշխատանքների ծավալումը պայմանավորված էր ոչ միայն Սյունիքի՝ անկախ թագավորություն լինելով, այլև արտաքին քաղաքական ասպարեզում հայոց Գագիկ Ա (990-1020) թագավորի հաջողություններով (տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք II, Եր., 2014, էջ 142):

[44] Տե՛ս **Ս. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 416:

[45] «Ստեփաննոսի Սիւնեաց...», գլ. ԽԱ, էջ 168: Բագրատունիների ժամանակա-

զրկվում են դարերով իրենց սեփականությունը համարվող հայրենի կալվածքներից:

X դարի 60-ական թվականներին Սյունյաց թեմի և Հայոց կաթողիկոսության միջև ծագած տարաձայնությունների պատճառով Անանիա Մոկացին (941-965) «աւերեաց զտեղին և քանդեաց» եպիսկոպոսարանը, որի հետևանքով Տաթևի՝ որպես առաջնորդանիստի դերը էապես նվազեց, գավառների հոգևոր առաջնորդները դադարեցին ճանաչել Տաթևի գերագահությունը: Իշխանները վանքապատկան գյուղերը նվիրում են «ազատաց իւրեանց»: Օգտվելով խառնաշփոթ վիճակից՝ գյուղացիները վերադառնում և բնակություն են հաստատում հայրենի Ցուր գյուղի նախկին տեղում: Հետագայում, երբ հարթվում են տարաձայնությունները, և վանքը կրկին ոտքի է կանգնում ու փորձում ցուրացիներին վռնդել այդ վայրերից, վերջիններս կրկին ապստամբության դրոշ են բարձրացնում: Պայքարը անողոք էր, և այն տարվում էր ոչ թե առանձին գյուղացիների կամ խմբերի կողմից, այլ ողջ համայնքի[46]: «Ցուրի բնակիչների այս երկրորդ ելույթը մի էպիզոդիկ ըմբոստացում չէր, այլ շարժում տևական ժամանակի մեջ: Ցուրն այս անգամ էլ մենակ չէր»[47],- գրում է Սյունիքի պատմության հմուտ ուսումնասիրող Հ. Ութմազյանը: X դարի վերջին քառորդին Սյունյաց եկեղեցու դեմ բռնկված շարժումները թաքուն կամ բացահայտ երբեմն հրահրում էին նաև մանր ազնվականները, որոնք չէին հաշտվում այն մտքի հետ, որ իրենց սեփական տիրույթների հաշվին համալրվում էին եկեղեցու հողային ֆոնդը և շարժական գույքը:

Սյունիքի գյուղացիական ապստամբությունը X դարի վերջին առնչվել է նույն ժամանակաշրջանում Հայաստանի մյուս գավառներում ծավալված շարժումների, ի մասնավորի՝ թոնդրակյան ելույթների հետ[48]: Այս հանգամանքը բազմապատկում էր այն մարտահրավերների

շրջանում Հայաստանում գոյություն են ունեցել թեև ոչ շատ, բայց ազատ գյուղական համայնքներ, որոնց անդամները սեփականության իրավունքով տիրել են իրենց հողերին: Գյուղական ազատ համայնքի բնակիչները, ի տարբերություն ոչ ազատ համայնքի բնակիչների, վճարում էին պետական և եկեղեցական հարկեր ու տուրքեր և ազատ էին այն պարտավորություններից ու տուրքերից, որ տալիս էին կախյալ կամ ճորտ գյուղացիները իրենց տերերին (տե՛ս **Ս. Պողոսյան**, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դդ., Եր., 1956, էջ 124): «Հին հայրենատէրք» գյուղացիները՝ իրավական առումով եղել են ազատ և ունեցել են տեղաշարժման իրավունք (տե՛ս **Գր. Գրիգորյան**, Սյունիքի թագավորությունը (X-XII դարեր), «ՊԲՀ», 2006, № 2, էջ 137):

[46] Տե՛ս **Ե. Արտյոնյան**, նշվ. աշխ., էջ 178:

[47] **Հ. Ութմազյան**, նշվ. աշխ., էջ 278-279:

[48] Պատմաբան Ս. Պողոսյանի կարծիքով՝ թոնդրակյանները գործել են նաև Սյունիքում և Աղվանքում (տե՛ս **Ս. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 413): Պրոֆ. Ա. Աբրահամյանի կարծիքով՝ ապստամբների մեջ եղել են նեստորականներ և քաղկեդոնականներ (տե՛ս **Абрамян А.**, նշվ. աշխ., էջ 65): Սյունյաց կալվածատեր վանքերի մղված գյուղացիական պայքարը թոնդրակյան շարժման բաղկացուցիչ մասն է (**Գր. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 224):

ուժը, որ նետված էր Սյունիքի հնավանդ կրոնական կառույցին: Իբրև այս տեսակետի ապացույց կարելի է շեշտել գյուղացիների ընդգծված բացասական վերաբերմունքը վանքի, վանականների և հատկապես առաջնորդի նկատմամբ, որը հասնում է ծայրահեղ դրսևորման՝ եպիսկոպոսի սպանության: Ստ. Օրբելյանի՝ ապստամբներին բնորոշող ծայրահեղ տերմինաբանությունը՝ «աւազակք», «սրիկայք», «ելուզակք», «ժպիրիք», «անաստուածք», «հեթանոս», խոսում է այն մասին, որ այդ գյուղերում գործել է «հինգերորդ շարասյուն», այն է՝ ապստամբների մեջ եղել են Հայաստանի այլ վայրերից կամ հարևան երկրներից ներդրված մարդիկ, որոնք իրականացրել են սադրանքներ, հրահրել և ուղղորդել են շարժումը:

Հայոց պետականության թուլացման պայմաններում եկեղեցին ազգային ինքնությունը սնուցող միակ կառույցն էր: Հարվածելով և թուլացնելով Հայոց եկեղեցու թևերը՝ արտաքին ուժերը ծրագրում էին նվազեցնել նրա համախմբող ուժը, ասպարեզից հանել այդ ժամանակ հայ ժողովրդին միավորող միակ ինստիտուցիոնալ կառույցը:

Ամփոփելով շարադրանքը և ի մի բերելով հիմնական եզրակացությունները՝ արձանագրում ենք.

- X դարի վերջին քառորդին Տաթևի եպիսկոպոսական կենտրոնը շարունակում է բռնազավթել շրջակա գյուղերի հողակտորները, որոնց ժառանգական սեփականության իրավունքով տիրում էին ազատ գյուղացիական համայնքները: Բռնագրավելով համայնքի հողերը՝ նրանք արտաքսում էին այդտեղ ապրող գյուղացիներին: Իրենց պապենական հողերից գյուղացիներին տեղահանելով և նրանց հողերը յուրացնելով՝ հոգևոր ավատատերերը միևնույն ժամանակ չեզոքացնում էին այն վտանգները, որոնք սպառնում էին վանքին այդ գյուղերի բնակիչների կողմից:
- X դարի վերջում Սյունիքում վերսկսված գյուղացիական ապստամբությունների գլխավոր թիրախը, ինչպես նախկինում, խոշոր կալվածքների տիրապետող հոգևոր ավատատերերն էին:
- Եկեղեցական ավատատիրության վարած տնտեսական քաղաքականությունը իր մեթոդներով երբեմն ավելի անտանելի էր, քան աշխարհիկ տերերինը: Տնտեսական շահագործման նոր ձևերը աննախադեպ չափով մեծացրել էին գյուղացիության հարստահարման ծավալները:
- Սյունյաց եկեղեցու դեմ բռնկված գյուղացիական ընդվզումները գեներացվել են արտաքին ուժերի կողմից. Սյունիքի գյուղացիական շարժումը կապ ուներ Հայաստանի այլ վայրերում ծավալված թոնդրակյան շարժման հետ:
- Հարձակումների թիրախ ընտրելով Հայոց եկեղեցու հնավանդ Սյունյաց աթոռը՝ արտաքին ուժերը նպատակ ունեին ճեղքելու հայ եկեղեցու կառուցվածքային և դավանանքային միասնականությունը:

- Եկեղեցական ավատատիրության դեմ պայքարում էին ամբողջական համայնքներ և ոչ թե անհատ գյուղացիներ կամ խմբեր:

- Գյուղացիներին իրենց հայրենական հողերից արտաքսելու գործում Սյունիքի հոգևոր իշխանությունը սերտորեն համագործակցում էր քաղաքական իշանությունների հետ: Գյուղական համայնքների հողերը յուրացվում էին ոչ միայն հոգևորականների, այլ նաև իշխանների կողմից:

Բանալի բառեր – *Սյունիք, եպիսկոպոս, ավատատիրություն, իշխանական նվիրատվություն, Տաթև, Յուր, ապստամբություն, վանական կալվածատիրություն, զավթել, հայրենատեր*

ВАРДАН АЛЕКСАНЯН – ***Сюникский престол в период крестьянских волнений конца X в.*** – В конце X в. Сюникская епархия переживала серьёзные социальные волнения. Возобновилось поднятое в начале века крестьянское восстание, направленное против церковного землевладения. Причиной волнений послужило внедрение новых методов экономического угнетения крестьян со стороны монастырей. На сюникском престоле в 965–997 гг. сменяли друг друга епископы Ашот (дважды), Иоаннес и Самвел. Историк X111 в. Степанос Орбелян характеризует их исключительно позитивно. При них социальная ситуация в Сюнике была относительно спокойна. Всё изменилось при епископе Иакове II (997-1000), крестьянские волнении возобновились в силу экономической политики Татевского престола. Хозяйственное и правовое положении крестьян ухудшилось. Пострадали село Цур и окрестные деревни, жители которых были старыми вотчинниками – наследственными собственниками своих земель. Повстанцы разрушили епархиальную резиденцию, Татевский монастырь и убили предводителя. На престол взошёл епископ Григорий III. По его просьбе в дело вмешивается светская власть, и восстание было подавлено, а село Цур сровняли с землёй. При епископе Григории были воздвигнуты новый монастырский комплекс Воротнаванк и несколько церквей.

Ключевые слова: *Сюник, епископ, феодализм, княжеский дар, Татев, Цур, восстание, монастырское землевладение, захватывать, вотчинник*

VARDAN ALEXANYAN – ***Syunik Trone during Peasant Unrest at the End of the 10th Century.*** – At the end of the 10th century, the Syunik diocese was experiencing serious social unrest. The peasant uprising, directed against church land ownership which began early in the 10th century, was resumed. The reason for the resistance of the peasants in Syunik was the introduction of new methods of economic oppression of the peasants by feudal monasteries. In 965-997s Bishops Ashot, Johannes, Ashot (for the second time), and Samvel came to the throne of Syunik one after the other. Syunik historian St. Orbelyan characterizes them with exceptionally positive epithets. Under their spiritual leadership, the social situation in Syunik was relatively calm. The situation changed under Bishop Jakob II (997-1000). Under Jacob, peasant unrest resumed with a new force. The reason for this was the economic policy of the Tatev throne at the head of Hegumen Jacob. The result of this policy was the deterioration of the economic and legal situation of the peasants. The sacrifice of Jacob's plans of aggression was the village of Tsur and the surrounding villages, whose inhabitants were old estates, that is, the hereditary owners of their lands. However, the bishop here meets with strong resis-

tance from these villages. Peasant rebels destroy the diocesan residence-Tatev Monastery and kill the leader. After the assassination of Jacob, Bishop Gregory III ascended the throne. At the request of Gregory, secular power intervenes in the matter. The uprising was finally suppressed, and by order of the Syunik king Vasak, the village of Tsur was destroyed and razed to the ground. Under Bishop Gregory (1000-1006) a new monastery complex Vorotnavank and several churches were erected in Syunik.

Key words: *Syunik, bishop, feudalism, princly talent, Tatev, Tsur, rebellion, monastic land ownership, seize, owner of land*

Ներկայացվել է՝ 21.01.2020
Գրախոսվել է՝ 07.02.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020